

Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայությունն չանցած քաղաքացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**<<ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. <<Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական
ծառայություն չանցած քաղաքացիների մասին>> Հայաստանի
Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-8-Ն օրենքի
(այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

<<Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների
դիմումների վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով Հայաստանի
Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվում է
պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները
քննարկող հանձնաժողով և հաստատվում է հանձնաժողովի անհատական
կազմն ու գործունեության կարգը: Հանձնաժողովի եզրակացությունը հաշվի
առնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարն
ընդունում է հրաման՝ քաղաքացու կողմից վճարվող գումարի չափի մասին:
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի
հիման վրա հանձնաժողովի կողմից դիմումատուին 3 աշխատանքային օրվա
ընթացքում ուղարկվում է դիմումի պատասխան, որում նշվում են վճարվող
գումարի չափը և վճարման հաշվի համարը:>>:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը: